ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱ ԽԱԼԱԹՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ԿՈՒՅՍԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հռիփսիմյանց կույսերի մասին պատմագրական յուրաքանչյուր տեղեկություն գիտական արժեք ունի, որի շնորհիվ պարզվում է կույսերի պատմության ընդհանուր պատկերը: Սակայն պակաս հետաքրքիր չեն նաեւ այն ուսումնասիրությունները, որոնք ինչ-որ չափով հակասում են կույսերի պատմական գոյությունը:

Օրմանյանը, խոսելով նահատակ կույսերի մասին, որոշ կասկածանք է արտահայտում նրանց վերաբերող պատմական փաստերի եւ եղելությունների վերաբերյալ. «Որչափ ալ այս աւանդութիւնը ազգին մէջ տարածուած է, սակայն դիւրին չէ անոր ամեն պարագաները հաստատել, ոչ այնչափ պատմական փաստերու տկարութեան, որչափ եղելութեանց ներքին հանգամանքներու պատճառով: Որովհետեւ ոչ Դիոկղետիանոս Հռոմ էր, եւ ոչ այդ կերպով ամուսնութիւն կրնար ընել, ոչ պատկերի վրայ ընտրութիւն կ՚ըլլար, եւ ոչ ալ վերջապէս 70 կոյսերու բազմութիւն մը կրնար ապահովութեամբ այդչափ ընդարձակ ու դարձուդարձ ուղեւորութիւն մը կատարել»[1]:

Ղ. Ալիշանը, խոսելով կույսերի մասին, ասում է. «...Որչափ ալ երկբայելի է Դիոկղետիանոսի սիրահարիլն ի պատկեր Հռիփսիմէի եւ խնդրելն, օտարք ալ պատմեն նման բան մի. այդ կայսեր ի կողմանս Ցունաց եղած ատեն՝ տեսնելն տասներեք տարուան գեղեցիկ աղջիկ մի Փիլումենա անունով, խնդրել հարսնացընել իրեն եւ մերժելով՝ չարչարել եւ նահատակել զնա: ԺԹ դարու սկզբան (1802թ.) Հռովմայ (Պրիսկիլեան) գետնադամբարանաց մէջ գտնուեցան իր նշխարքն, հռչակուեցաւ անունն եւ պատիւն, տօնի ի 10 կամ 13 օգոստոսի ամսոյ»[2]:

Որոշ գիտնականներ իրոք փորձել են ի դեմս Հռիփսիմեի տեսնել դեռատի կույս Փիլումենային, առավել եւս, որ երկուսն էլ սերել են թագավորական տոհմից:

Ըստ ավանդության Փիլումենան Հունաստանի արքայի դուստրն էր: Ավանդությունը պատմում է, որ նրա ծնողները երկար տարիներ զավակ չեն ունեցել եւ ամեն անգամ զոհ մատուցելով՝ աղոթել են ջաստվածներին զավակի համար: Օրերից մի օր նրանց պալատական քրիստոնյա բժիշկը՝ Պուբլիոսը, պատմում է թագավորին Քրիստոսի մասին եւ ասում, որ եթե նրանք մկրտվեն եւ աղոթեն իրական Աստծուն, ապա զավակ կունենան: Լսելով այդ մասին՝ թագավորն ու թագուհին մկրտվում են եւ աղոթում, որպեսզի Աստված նրանց զավակ պարգեւի: Մեկ տարի անց թագավորական ընտանիքում ծնվում է գեղեցիկ մի աղջիկ, որին անվանում են Լումենա՝ այսինքն լույս: Հետագայում աղջկան սկսում են կոչել Փիլումենա («Լույսի դուստր»), քանի որ աղջիկը ծնվել է Քրիստոսի հավատքի լույսի տակ:

---

1 **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 80:

2 **Ղ. Ղեւոնդ Ալիշան,** Արշալոյս Քրիստոնեութեան Հայոց, Վենետիկ, 1902, էջ 103:

Ֆիլումենան մկրտվում է եւ առաջին անգամ հաղորդություն առնում, երբ բոլորում է հինգ տարեկանը: Նա մեծանում է քրիստոնեական հավատքի եւ բարեպաշտության ոգով եւ ստանում պալատական կրթություն:

Երբ Ֆիլումենան տասներեք տարեկան էր, Հռոմի Դիոկղետիանոս կայսրը պատերազմ է հայտարարում աղջկա հորը եւ անմիջապես պատերազմական գործողություններ սկսում նրա դեմ: Հասկանալով, որ իր թագավորությունը երկար չի կարող դիմակայել հռոմեական ահեղ ռազմական մեքենային, թագավորը որոշում է իր ընտանիքի հետ միասին գնալ կայսեր մոտ՝ անձամբ խնդրելու դադարեցնել պատերազմը եւ հաշտության պայմանագիր կնքել: Երբ թագավորն իր ընտանիքով մտնում է կայսեր մոտ, վերջինս, տեսնելով դեռատի աղջկա գեղեցկությունն ու անմեղությունը, չի կարողանում թաքցնել իր մոլեգնած ցանկությունն աղջկա նկատմամբ: Դիոկղետիանոսը հավաստիացնում է արքային, որ կդադարեցնի պատերազմը եւ հաշտություն կկնքի նրա հետ, եթե վերջինս համաձայնի իր աղջկան՝ Ֆիլումենային հարսնացնել կայսեր հետ: Թագավորին ոչինչ չի մնում անելու, քան համաձայնել կայսեր առաջարկին: Բայց դեռատի աղջիկը հրաժարվում է՝ ասելով՝ «Աստված է իմ հայրը, եւ երկինքն էլ իմ մայրն է»: Երբ կայսրը լսում է աղջկա պատասխանը, զայրույթից կատաղում եւ հրամայում է նետել նրան զնդանը՝ ակնկալելով, որ այնտեղ նա կփոխի իր որոշումը: Ամեն օր կայսրը այցելում է Ֆիլումենային եւ ամեն անգամ մերժում ստանում: Երեսունվեցերորդ օրը կույսին երեւում է Ս. Աստվածածինը եւ պատգամում ամուր մնալ իր հավատքի մեջ՝ ասելով, որ եւս երեք օրվա ընթացքում աղջիկը պիտի ջարդի դեմ պատերազմի եւ հաղթական պիտի դուրս գա: Ս. Աստվածածինը ասում է նաեւ, որ ինքը Գաբրիել հրեշտակապետի հետ միասին պիտի օգնի աղջկան: Երեք օր անց կայսրը հրամայում է աղջկա պարանոցից շղթա կապել եւ նետել գետը: Սակայն բազմաթիվ վկաների աչքի առաջ Աստծո երկու հրեշտակներ փշրում են շղթաները՝ նետելով դրանք գետը, իսկ Ֆիլումենան աստվածային հրաշքով մնում է կենդանի: Ականատեսները տեսնում են, որ ջրի մեկ կաթիլ անգամ չի թրջում կույսի երիտասարդ մարմինը: Այս անգամ կայսրը հրամայում է նետերով սպանել Ֆիլումենային: Սակայն, երբ նետաձիգներն արձակում են նետերը, դրանք, հրաշքի օգնությամբ հասնելով դեռատի օրիորդի մարմնին, հանկարծ փոխում են իրենց ուղղությունն ու վերադառնում դեպի նետաձիգները՝ սպանելով վեց հոգու: Անհաջողություններից կատաղած կայսրն այս անգամ հրամայում է գլխատել կույսին եւ այսպիսով կարողանում է վերջնականապես նահատակել նրան:

Ֆիլումենայի նահատակության օրը համարվում է օգոստոսի տասը[3], իսկ նահատակության թվականը տատանվում է 295-301 թթ. միջեւ, որը գրեթե համապատասխանում է Հռոմի եւ հունական թագավորության միջեւ պատերազմի դադարի, ինչպես նաեւ Հռիփսիմե կույսի նահատակության թվականի հետ: Տատանվում են նաեւ նրանց նահատակության ամսաթվերը, ու օրերը: Հռիփսիմեի նահատակության ամսաթիվն ըստ Ագաթանգեղոսի, Հռոի ամսվա քսանվեցն է, այսինքն՝ հոկտեմբերի յոթը, իսկ Ֆիլումենայի նահատակության օրը համարվում է օգոստոսի տասը:

1802թ. մայիսի 25-ին Հռոմի Պրիսկիլյան կոչված հին գետնադամբարաններում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվում է Ֆիլումենայի դամբարանը՝ ջրաշու-

3 www.traditionnaction.org/SOD/a001St.Philumena8-10.htm. St.Philomena Filumena@TraditionInaction.org.

շանի, նետերի եւ նետաձիգների հարթաքանդակներով, որոնք պատկերում են կույսի նահատակության տեսարանները: Ֆիլոմենայի դամբարանի վերեւում գրված է Lumena paxe comfi, որը նշանակում է. «Թող խաղաղությունը քեզ հետ լինի, Լումենա»[4]:

Անշուշտ, ոմանց կողմից Ֆիլոմենայի եւ Հռիփսիմեի անձերի անուղղակի նույնացումը արդյունք է պատմական եւ անձնական որոշ նմանության: Թե Հռիփսիմեի եւ թե Ֆիլոմենայի պարագաներում նրանք նման են միմյանց հետեւյալ հատկանիշներով.

1. *Սերում են ազնվական կամ թագավորական ընտանիքից:*
2. *Երկուսի պարագայում էլ կույսը ցանկանում է կնության առնել կույսին:*
3. *Դեռատի օրիորդական հասակում են:*
4. *Հռոմահպատակ են:*
5. *Քրիստոնյա են:*
6. *Մերժում են կայսեր առաջարկը:*
7. *Բանտարկվում են, եւ երկուսին էլ կույսը այցելում է նրանց մտադրությունը հարցնելու նպատակով:*
8. *Երկուսի պարագայում էլ ասպվածային միջամտություն եւ պաշտպանություն է տեղի ունենում:*
9. *Նրանց նահատակությունը կատարվում է մեկ - երկու ամիսների տարբերությամբ:*

Ինչքան էլ նման լինեն երկու կույսերի պատմությունները եւ ինչքան էլ որոշ պատմագետների երկերում վերոնշյալ պատմություններում կերպարների նույնացման միտում նկատվի, այնուամենայնիվ, տարակուսելի է նրանց պատմության նույնացման եւ պատմությունների աղավաղման հետեւանքով առաջացած անձերի շփոթության հարցը: Բնականաբար, հաշվի առնելով, որ Ֆիլոմենայի աճյունը հայտնաբերվել է Հռոմում՝ Պրիսկիլյան գետնադամբարանում, իսկ Հռիփսիմեինը՝ Հայաստանում, ինչպես նաեւ մի շարք այլ անհամաձայնություններ, պետք է ենթադրել, որ իրոք այդ պատմությունները մեկը մյուսի հետ որեւէ առնչություն չեն կարող ունենալ: Չնայած ավանդությունների որոշ նմանությանը՝ դեպքերի զարգացումներն ու նրանց հստակ հաջորդականությունը առաջացնում են ժամանակային անհամաձայնություններ, որոնք չեն կարող առաջացած լինել պատմությունների կերպարանափոխությունների եւ դեպքերի ուռճացումների հետեւանքով:

Հռիփսիմեի վկայաբանությունից է մասամբ ազդված պարսկական նշանավոր «Հազար ու մի օրեր» վեպի մեջ Ripsima-ի պատմությունը: Ripsima-ն Temim անունով նշանավոր մի վաճառականի կին էր, որն ապրում էր Բասրայում: Նա խիստ ջերմեռանդ ու բարեպաշտ կին էր, սակայն իր գեղեցկության պատճառով երեք անգամ ենթարկվում է ծանր փորձությունների, բայց, առանց պատիվը կորցնելու, կրում է իր տանջանքներն ու դատապարտությունը: Վերջում նկարագրվում է, թե ինչպես է պարզվում նրա անմեղությունը, որի պատճառով եւ արդարացվում է[5]:

4 www.saint-philomena.com/background.html

5 **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ.Գ, Երեւան, 1946, էջ 102:

Հռիփսիմեի պատմությունը առկա է նաեւ ղպտիների մոտ: Նրանք նմանատիպ մի պատմության մեջ Հռիփսիմեին կոչում են Արփիսիմա[6]:

Գիտնականներից ոմանք, այդ թվում նաեւ Ա. Գուդշմիդը եւ Հ. Տաշյանը, կասկածի տակ են դրել Ագաթանգեղոսի պատմության որոշ դրվագներ եւ հատկապես Հռիփսիմյանց կույսերի վկայաբանության պատմական իրողությունն ու ճշմարտացիությունը::

Ագաթանգեղոսի պատմության մեջ նկարագրված կույսերի վկայաբանության պատմությունը Հ. Տաշյանը համարում է «կղզիացած» պատմություն: Ըստ նրա՝ այդ պատմության սկիզբն ու վերջը գրամաբանորեն չեն կապվում միմյանց հետ[7]: Հիմք ընդունելով որոշ պատմական տեղեկություններ ու որոշ եկեղեցական հնախոսական ավանդություններ՝ հեղինակը կասկածելի է համարում Դիոկղեցիանոսի կողմից Հռիփսիմեին ամուսնության առաջարկ անելը, հատկապես, որ նա մինչ կայսր դառնալն արդեն ամուսնացած էր Պրիսկայի հետ[8]. «...Շատ միաբան չեն նաեւ Հռիփսիմեանց պատմութեան մանրամասն պարագայք - այսպէս՝ թէ Դիոկղեցիանոս, որ արդեն ինքնակալ չեղած ամուսնացած էր Պրիսկայի հետ, կին խնդրած ըլլայ «ի քաղաքին հռոմեացւոց» եւ այն բազմութիւն «կուսանաց արգելավանքի» մէջ ուր Հռիփսիմէն էր «ի թագաւորական տոհմէ»[9]:

Տաշյանը Ս. Հռիփսիմեի վկայաբանությունը փորձում է համեմատել նմանօրինակ պատմությունների հետ, որոնք թերեւս ինչ-որ չափով կարող էին շփոթմունքի պատճառ հանդիսանալ: Դարձյալ, հակվելով Ա. Գուդշմիդի կարծիքին, Տաշյանը կույսերի վկայաբանությունը համարում է «հավասար ոչինչ»-ի: Սակայն Գուդշմիդի գված Տրդատի եւ Նազենիկ հարճի մասին պատմության համեմատությունը համարում է անհավանական եւ սխալ մի շարք պատմական եւ գրամաբանական պատճառներով. «Լոկ Շուշանայ պատմութեան համեմատ ձուլած է սոյն կոյսին Հայաստանի մէջ ըրածներուն պատմութիւնը եւ այլ հանգամանքն զոր մի առ մի կրկնել աւելորդ կհամարիմք: Այս իսկ պատճառաւ Հռիփսիմեանց վկայաբանութեանց պատմական արժէքն «հաւասար ոչինչ է» ըստ Կուդշմիդի[10], որ աւելի յառաջ երթալով կհամարձակի ըսել՝ թէ Բագրատունի Տրդատայ եւ Նազինիկ հարճին վրայ պատմուածը[11] հիմն է Հռիփսիմեայ պատմութեան: Բայց կարծենք դժուար է զայս ընդունիլ, մանաւանդ, որ հեթանոս Նազինկան վրայ Խորենացւոյ պատմածը գրամաչափապէս հակառակ է Հռիփսիմէի գրուած նկարագրին եւ անընդունելի է՝ որ այնպէս կանուխ ժամանակաւ այնչափ փոփոխուէին աւանդութիւնք, մինչեւ վատահամբաւ հարճ մը ճշդիւ զգաստ սրբուհւոյ փոխուէր եւ պաշտուէր, մինչդեռ մեր նախնիք հեթանոսութեան ամենադոյզն հետքերը՝ հեթանոսական դիւցազանց նախահաւուց վրայ եղած աւանդութիւնքն իսկ անհետ ընել կը ճգնէին»[12]:

Թեպետ Տաշյանը հերքում է Տրդատի եւ Նազենիկ հարճի պատմության նույնացու-

6 Անդ:

7 Տե՛ս **Հ. Տաշեան,** Ագաթանգեղոս առ Գէորգայ եւ ուսումնասիրութիւն առ Ագաթանգեղայ գրոյ, 1891, Վենետիկ, էջ 135:

8 Այստեղ հարկ է նշել, որ Դիոկղեցիանոսն իր իշխանության երկրորդ կեսից տեղափոխվում է Բյուզանդիոն եւ բնակվում այնտեղ: Ըստ որոշ աղբյուրների՝ նա Բյուզանդիոնը դարձնում է կայսրության մայրաքաղաք: Վերը նշված անհամաձայնությունների մեջ հեղինակները, ըստ երեւույթին, հաշվի են առել նաեւ այս հանգամանքը:

9 **Հ. Տաշեան,** նշվ. աշխ., էջ 135:

10 **Հ. Տաշեան,** նշվ. աշխ., էջ 135:

11 **Մովսէս Խորենացի,** Հայոց Պատմություն, գլ. ԿԳ, Երեւան, 1968, էջ 197 - 198:

12 **Հ. Տաշեան**, նշվ. աշխ., էջ 136:

մը Հռիփսիմե կույսի վկայաբանության հետ, սակայն, այնուամենայնիվ, կասկածի տակ է դնում Ս. Հռիփսիմե կույսի վկայաբանության պատմական իրողությունը: Նա ասում է, որ չնայած վկայաբանությունն ինքնին հեռու է ճշմարտությունից, սակայն չի կարելի պնդել, որ այնտեղ իսպառ բացակայում է պատմական տարրը: Այսպես, օրինակ կույսերի վկայաբանության նմանօրինակ դեպք կարող էր պատահել Հայաստանում կամ Հայաստանի մերձավոր սահմաններում: Պատմությունը կարող էր ուռճացվել ու խեղաթյուրվել. «Այո՝ թէեւ Հռիփսիմեանց պատմութիւնը անվաւերական եւ կէղծ պարագաներով հիւսուած է, բայց գոնեայ պատմական նշոյլքներ պակսելու չեն անշուշտ անոր մէջ:

Կարծենք դժուարութիւն մը չկայ ընդունելու, թէ կուսանք ոմանք Հայաստան փախած ըլլան նոյն հալածանաց առթիւ Ասորիքէն կամ թերեւս ի Փոքր Հայոց եւ կամ մերձաւոր տեղերէն, թեպէտ ոչ այնչափ բազմութեամբ վանական կուսանաց՝ որոնք եկած ըլլան ի Հռոմայ: «Ի հռոմոյ» եկած կուսանքն կրնային վրիպմամբ «ի Հռոմայ» փոխած համարուիլ: Անհաւատալի չէ թէ այս փախստեան պատճառն հալածանքն էր, եւ գիտենք ալ, որ Մաքսիմինոս Դայեայ յարեւելս եւ Մաքսենտիոս ի Հռոմ՝ դարանակալ էին կուսանաց անմեղութեան»[13]:

Հ. Տաշյանը ենթադրում է, որ «ի Հռոմոյ»-ն սխալմամբ կարող էր գրվել «ի Հռոմայ» եւ այդպիսով մի խումբ կույսերի՝ Ասորիքից կամ Փոքր Հայքից փախած կամ եկած լինելու փոխարեն ենթադրվեր, որ եկել են Հռոմից:

Նմանօրինակ կարծիքի է հակված նաեւ Մաղաքիա արք. Օրմանյանը՝ համարելով, որ քրիստոնյա մի խումբ կույսեր Հայաստանի Մծբին քաղաքից կարող էին նման պատմության հանդիպել: Հեղինակը հնարավոր է համարում նաեւ, որ Հռիփսիմյանց կույսերի փոխարեն այլ կույսեր կարող էին եկած լինել Հոգվոց վանքից, եւ դրա հավանականությունը նա մեծ է համարում: Այս առիթով նա մասնավորապես ասում է. «...Ուրիշներ մտածեցին, թէ կրնան ասոնք եղած ըլլալ այն խումբ մը կոյսեր որք Մծբինի վանքէն փախան, ինչպէս Ս. Փեբրոնէի վկայաբանութեան մէջ կը կարդացուի (Վրք. Զ. 81): Բայց այս մեկնութիւններէն հաւանակագոյն եւ ընտրելագոյն կը կարծենք ըսել, թէ առաքելական ժամանակէ սկսած Հոգւոց վանքի հայազգի կոյսերէն էին, որք հալածանաց ատեն բռնուած, եւ իբրեւ նշանաւոր անձեր մինչեւ թագաւորին ատեանը հանուած են: Աւանդական պատմութեան մէջ ալ յատկապէս յիշուած է Տիրամօր պատկերին տեղը, իբրեւ կոյսերուն օթարաններէն մէկը, որ է նոյնիսկ Հոգւոց վանքը (Խոր. 301): Բայց ինչ ալ ըլլայ Հռիփսիմեան կոյսերուն ծագման մթութիւնը, այն չի կրնար անոնց իսկութեան եւ մարտիրոսութեան պատմութիւնը ջնջել»[14]:

1978 թվականին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանբ Ս. Հռիփսիմե վանքում կատարված վերանորոգչական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեցին Ս. Հռիփսիմե կույսի նահատակակից ընկերուհիներից շատերի աճյունները[15]: Վերջերս Մայր Աթոռի Գանձատան պահոցներում գտնվել է նաեւ Ս. Հռիփսիմե կույսի գանգոսկրից մի փոքրիկ մասունք, որը զետեղված է եղել արձանագրությունով մի արծաթյա մասնատուփի մեջ[16]:

---

13 Անդ, էջ 138, **Եւսեբիոս**, Վարք Կոստանդիանոսի, Ա, գլ. ԼԴ:

14 **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 81:

15 Այս մասին տես Մայր Աթոռի 30 ապրիլ 1978 թվականի հաղորդագրությունը /«Էջմիածին», մայիս, 1979, էջ 4-6/, նաեւ տես՝ «Էջմիածին», 1979, ապրիլ, էջ 35-38:

16 Տես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գանձատան քարտադարանը /արծաթյա պահոց/:

Այսպիսի պատմական փաստարկները, կարծում ենք, վերջ դրեցին պատմագրության մեջ ծագած տարատեսակ ենթադրություններին, որոնք այս կամ այն չափով կասկածի տակ էին դնում կույսերի գոյության իրողությունը: Իսկ հաշվի առնելով, որ պատմության ընթացքում վանքերի վերանորոգության ժամանակ Ս. Հռիփսիմեի եւ Ս. Գայանեի մասունքները բազմիցս գտնվում եւ վերակնքվում էին մեր հայրապետների կողմից, ապա, իրոք, նրանց պատմական իրողության փաստը անառարկելի է դառնում: «Հռիփսիմեանց վկայութեան պատմութիւնը շատ խծբծանաց ենթարկուած է օտարներու կողմանէ, մինչեւ իսկ անոնց գոյութիւնը ուրանալու չափ: Սակայն անոնց ծագումին խնդիրը նահատակութեան խնդիրէն զատելով, այդ վերջին մասը իրեն համար հաստատուն փաստեր ունի ազգային նախնական եւ անընդհատ աւանդութեան եւ ժամանակակից պատմութեան մէջ, եւ նոյն իսկ իրենց գերեզմաններուն եւ վկայարաններուն փաստովը»[17]:

Կույսերի վկայաբանության հետ կապված զանազան հակասական տեսակետները, որոնք առաջացել են որոշ գիտնականների ուսումնասիրությունների արդյունքում, հնարավոր չէ դիտարկել եւ հասկանալ առանց կուսանաց պատմության սկզբնաղբյուրի, այսինքն՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» աշխատության ուսումնասիրության: Թեպետ այս գործը մեր պատմագրության հնագույն եւ հայտնի աշխատություններից է, սակայն, միեւնույն ժամանակ, փաստերի հավաստիության տեսակետից ամենավիճելիներից է:

Սակայն, որքան էլ վիճարկելի լինի Ագաթանգեղոսի ինքնության եւ նրա ապրած ժամանակաշրջանի հարցը, եւ որքան էլ զանազան քննության ենթարկված լինի նրա պատմությունը, նա մնում է մեր պատմագրության հետաքրքիր դեմքերից մեկը: Այդ շարքի մեջ բացառություն չի կազմում Ս. Հռիփսիմյանց եւ Ս. Գայանյանց վկայաբանությունը, որը գեղեցիկ եւ հուզական դրվագ է Աստծո վկայուհիների տարաբախտ կյանքից: Նրանք թեպետ ազգությամբ հայ չէին, բայց կարողացան հայանալ եւ սիրվել ոչ միայն մեր պատմիչների, այլեւ հայ ժողովրդի կողմից: Նրանք դարձան կուսության, հնազանդության, հեզության ու մաքրության խորհրդանիշ: Իրենց հավատքի զորությամբ եւ Աստվածային սիրով նրանք դարձան մեր Եկեղեցու սկզբնավորման կայուն հիմնաքարերը:

17 **Մաղաքիա ապբ. Օրմանեան,** Ազգապատում, հ. Ա, էջ 82: